Մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Գեղանուշի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (4-րդ դասարան 19 դասաժամ), թվային գրագիտության և համակարգչային գիտության (3 դասաժամ), ինֆորմատիկայի (5 դասաժամ), երաժշտության (2 դասաժամ), կերպարվեստի (2 դասաժամ), տեխնոլոգիայի(աղջիկների խումբ 1 դասաժամ,) տեխնոլոգիայի (տղաների խումբ 3 դասաժամ,) ձեռնարկատիրական կրթության (4 դասաժամ), ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Փաստաթղթերն ընդունվում են մարտի **13**-ից մինչև մարտի **26**-ը ներառյալ , ամեն օր ՝ ժամը **9:00**-ից **14:00**, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա **2024** թ. ապրիլի **2**-ին՝ ժամը **14:00**-ին, ՀՀ Սյունիքի մարզի Գեղանուշի միջնակարգ դպրոցում, հասցե՝ գ Գեղանուշ, Վերին թաղ 4:

Տեղեկությունների համար զանգահարել (0285) 2-44-87, (077) 10-87-48 հեռախոսահամարով: